# ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՕՄԱՍԱ

# ORGANIC FOOD PRODUCERS AND CONSUMERS ASSOCIATION

«OFPCA» NGO was established in February, 2006, which is an Association of organic agricultural products producers and consumers. On a social base it consolidates those individual farmers and organizations that have an aim to support organic agriculture foundation and development in Armenia.

«OFPCA» NGO provides an opportunity to obtain specialized knowledge and information to those farmers engaged in organic agriculture, as well as support them to receive a certificate for their organic products.

«OFPCA» NGO is ready to coordinate researches of domestic and international markets of organic products and also print booklets and leaflets.

«OFPCA» NGO finds necessary to establish a culture of organic products consumption in Armenia as well as try to found a legal base for production of organic agricultural produce in RA juridical policy.

«OFPCA» NGO is an open organization. Any farmer, who sees opportunities and advantages of organic agriculture development can become a member of an organization.

«OFPCA» NGO has 24 members, individuals and organizations, including Shen NGO, «Chir» and «Eco-globe» Ltd-s, «Argina» and «Lusakn» foundations, other individual farmers.

«OFPCA» NGO founded ,Amur Korizե Ltd. The same name shop was established to sell only certified organic produce or agricultural products of those farmers who are now in the process of shifting to organic farming.

«OFPCA» NGO activities are open for the society and those interested in organic agriculture organizations, thus all the information concerning the Mission of the association will be available on www.shen.am, which is the official site of Shen NGO, and through informative booklets and leaflets.

---

ՕՄԱՍԱ-ին վերաբերող ցանկացած տեղեկություն ստանալու համար զանգահարեք
Հեռ. (374 10) 56 70 31, 56 56 19
shen@arminco.com www.shen.am

ՇԷՆ
ՕՄԱՍԱ
gef GLOBAL ENVIRONMENT FACILITY
INVESTING IN OUR PLANET
SGP The GEF Small Grants Programme
UNDP

**ՕՄԱՍԱ**-ն Հայաստանում գործող օրգանական մթերք արտադրողների և սպառողների ասոցիացիա է, որը հիմնադրվել է 2006թ. փետրվարին: Այն հասարակական կարգով միավորում է այն բոլոր անհատներին և կառույցները, որոնք նպատակ ունեն աջակցել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության հիմնելուն և զարգացնելուն:

**ՕՄԱՍԱ**-ն խնդիր ունի օրգանական տնտեսությամբ զբաղվող մարդկանց տրամադրել մասնագիտական գիտելիքներ, տեղեկություններ, օժանդակել, որ այդ տնտեսությունները պատշաճորեն հավաստագրեն իրեց օրգանական արտադրանքը:

**ՕՄԱՍԱ**-ն պատրաստ է նաև կոորդինացնել ներքին և արտաքին



շուկաների ուսումնասիրությունները ու մարքեթինգային ձեռնարկները:

**ՕՄԱՍԱ**-ն անհրաժեշտ է համարում Հայաստանում քարոզել օրգանական արտադրանքի մշակույթը եւ ջանքեր գործադրել, որպեսզի ՀՀ օրենսդրական դաշտում արտացոլվեն օրգանական արտադրության իրավական հիմքերը:

**ՕՄԱՍԱ**-ն բաց կազմակերպություն է, որի անդամ կարող են դառնալ Հայաստանում գյուղատնտեսությամբ զբաղվող, օրգանական արտադրության առավելությունները ընկալող ու դրա ապագային հավատացող մարդիկ:

**ՕՄԱՍԱ**-ի անդամ են 24 անհատներ և կառույցներ, այդ թվում` «Շեն» բարեգործականը, «Չիր» եւ «Էկոգլոբ» ՍՊԸ-ները,



«Արգինա» եւ «Լուսակն» հիմնադրամները, անհատ ձեռներեցներ:

**ՕՄԱՍԱ**-ն հիմնել է «Ամուր կորիզ» ՍՊԸ-ն` համանուն խանութով, որտեղ վաճառվելու է միայն օրգանական գյուղմթերք կամ արտադրանքը ֆերմերային այն տնտեսությունների, որոնք այժմ անցում են կատարում դեպի օրգանական արտադրություն:

**ՕՄԱՍԱ**-ի գործունեությունը բաց է հանրության եւ շահագրգիռ կառույցների համար, ուստի Ասոցիացիայի առաքելությանը վերաբերող բոլոր տեղեկությունները առժամանակ տեղակայվելու են «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ինտերնետային կայքէջում և տարածվելու են առանձին տպագրված ծանուցողական բուկլետների տեսքով:

